ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐԱՍ ՕՋԲԻԼԻՋԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2024-2034

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արաս Օզբիլիզս, ծնվել եմ 09.03.1990 թվականին, ազգությամբ՝ հայ: Ամուսնացած եմ, ունեմ չորս երեխա՝ երեք որդի և մեկ դուստր, ընտանիքիս հետ ապրում և աշխատում եմ Երևան քաղաքում: Ֆուտբոլ մարզաձևի հանդեպ սերը ձևավորվել է մանուկ հասակից՝ հայրիկիս շնորհիվ, քանի որ նա շատ է սիրել ֆուտբոլը և մեծ հետաքրքրություն է ունեցել: Դեռ մանկուց հայրս իմ մեջ տեսնում էր ապագա ֆուտբոլիստի, ով կարող էր տիրապետել գնդակին՝ իրականացնելով իր վաղեմի երազանքը՝ դառնալ Հայաստանի ազգային հավաքականի ֆուտբոլիստ: Ֆուտբոլային կարիերայի առաջին քայլերս կատարել եմ Նիդեռլանդների Ամստերդամ քաղաքը ներկայացնող «Այաքս» ակումբի մանկապատանեկան թիմում: Ըստ եվրոպական ակումբների ընդունված կանոնների՝ ընդունելության համար սահմանված նվազագույն տարիքը 6-ն էր, սակայն ինձ տրված տաղանդի շնորհիվ ընդունեցին ակումբ, երբ ես ընդամենը 4,5 տարեկան էի: Մարզվելով ակումբում՝ ֆուտբոլի հանդեպ ունեցած սերն ու հետաքրքրությունն օրեցօր ավելանում էր: Արդեն 8 տարեկանում «Այաքս» ակումբի ակադեմիայի սան էի, որում ընդգրկում էին առավել տաղանդավոր մարզիկների: Հաջողությամբ հաղթահարելով մարզական ուղիս՝ մինչև 22 տարեկան, ֆուտբոլային գործունեությունս ծավալել եմ «Այաքս» ակումբում՝ մասնակցելով բարձրագույն խմբի 32 հանդիպումների և հեղինակելով բազմաթիվ գոլեր ու գոլային փոխանցումներ: Համարվել եմ «Այաքս» ակումբի բարձրագույն թիմի առաջատար և մեկնարկային կազմի ֆուտբոլիստ:

2012 թվականի փետրվարի 29-ին առաջին անգամ ստացել եմ Հայաստանի ազգային հավաքականի հրավեր, որի մասին միշտ երազել եմ: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի ազգային հավաքական հրավիրվել եմ 42 անգամ, որի կազմում խաղալով՝ հանդիսացել եմ 6 գոլի և 10 գոլային փոխանցման հեղինակ: Ինձ համար միշտ պատիվ է եղել կրել Հայաստանի ազգային հավաքականի մարզաշապիկը և ներկայացնել Հայաստանը միջազգային դաշտերում:

2012 թվականին փոխել եմ ակումբային գրանցումս և տեղափոխվել Ռուսաստանի Դաշնության Կրասնոդար քաղաքը ներկայացնող «Կուբան» ակումբ, որի կազմում մասնակցել եմ Ռուսաստանի Պրեմիեր Լիգայի հանդիպումներին և ճանաչվել լավագույն աջ կիսապաշտպան:

2013 թվականին տեղափոխվել եմ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքը ներկայացնող «Սպարտակ-Մոսկվա» ակումբ, որտեղ հաջողությամբ շարունակել եմ ֆուտբոլային ելույթներս մինչև 2016 թվականը:

2016 թվականին տեղափոխվել եմ «Բեշիքթաշ», սակայն վարձակալության հիմունքներով ֆուտբոլային գործունեությունս շարունակել եմ Իսպանական «Ռայո-Վալյեկանո» և Մոլդովական «Ծերիֆ» ակումբներում, իսկ 2019 թվականին ելույթներս շարունակել եմ Հոլանդական «Վիլլեմ II» ակումբում:

Մարզական կարիերաս շարունակելու համար ստացել եմ տարբեր շահավետ առաջարկներ, սակայն նախընտրել եմ վերադառնալ հայրենիք և տարիների ընթացքում ձեռքբերած մարզական գիտելիքներս, հմտություններս ու փորձս օգտագործել ի նպաստ հայկական ֆուտբոլի:

2019 թվականին տեղափոխվել եմ Երևանը ներկայացնող «Փյունիկ» ակումբ, որտեղ հանդիսացել եմ թիմի ավագ, մասնակցել Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնության հանդիպումներին. «Փյունիկ»-ում շարունակել եմ ելույթներս մինչև 2022 թվականը:

2020 թվականին իմ միջոցներով Երևան քաղաքի Ավան վարչական շրջանում կառուցել եմ բակային մարզադաշտ, որտեղ մարզվել և մարզվում են շնորհալի ու խոստումնալից ապագայով ֆուտբոլիստներ: Մարզադաշտի բացումը տեղի է ունեցել 2020 թվականի սեպտեմբերի 13-ին: Մարզադաշտի կառուցումը նպատակ է ունեցել ևս մեկ քայլ կատարել՝ Հայաստանում ֆուտբոլի զարգացման և բարգավաճման գործում:

2022թ. տեղափոխվել եմ ՖԱ «Ուրարտու» և խաղացել այնտեղ մինչև 2023 թ. նոյեմբերը: «Ուրարտու»-ի կազմում ակտիվ մասնակցել եմ թիմի բոլոր խաղերին՝ դառնալով բազմաթիվ գոլերի և գոլային փոխանցումների հեղինակ:

2022-2023 թթ. մրցաշրջանում նվաճել եմ Հայաստանի Պրեմիեր Լիգայի չեմպիոնի կոչումը և դարձել Հայաստանի Գավաթակիր:

2022-2023 թվականից հանդիսանում եմ ՀՖՖ մարզչական դպրոցի B հավաստագրի դասընթացների մասնակից:

Ընդհանուր առմամբ՝ ֆուտբոլային գործունեության ընթացքում, մասնակցել եմ ավելի քան 200 հանդիպման և հանդիսացել 9 տարբեր պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբների ֆուտբոլիստ, ծանոթացել նրանց սպորտային քաղաքականության և զարգացման ծրագրերին, առնչվել ֆուտբոլային կառավարման տարբեր համակարգերի հետ: Կարիերայիս ընթացքում ստացել եմ ոչ միայն ֆուտբոլային գիտելիքներ, այլև ձեռք եմ բերել ֆուտբոլ մարզաձևը զարգացնելու միջազգային պրակտիկ փորձ:

ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐԱՍ ՕԶԲԻԼԻԶԻ ՈՒՂԵՐՁԸ

Հարգելի երկրպագուներ, ֆուտբոլիստներ, ծնողներ, մարզիչներ, մրցավարներ, լրագրողներ, մեկնաբաններ վերլուծաբաններ, ակումբների սեփականատերեր, գլխավոր և սպորտային տնօրեններ, հանրային մասնավոր գործընկերներ, հայկական ֆուտբոլի հովանավորներ և նվիրյալներ:

Ես Արաս Օզբիլիզն եմ և առաջադրել եմ իմ թեկնածությունը Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի նախագահի պաշտոնին:

Իմ հիմնական նպատակն է բարեփոխել Հայկական ֆուտբոլը և միջազգային ասպարեզում այն հասցնել աննախադեպ հաջողությունների և նոր մակարդակի:

Հաջողություններ, որոնք թույլ կտան յուրաքանչյուր հայի հպարտանալ իր երկրով, մեր Ազգային հավաքականներով, հարազատ ակումբով և ֆուտբոլով զբաղվող տղաներով ու աղջիկներով: Ֆեդերացիան ղեկավարելու բացառիկ հնարավորությունը ինձ թույլ կտա ներդնել իմ ողջ անձնական փորձը ֆուտբոլում՝ հօգուտ նոր հայկական ֆուտբոլ կառուցելուն:

Ես հույս ունեմ, որ այս ծրագրին ծանոթանալուց հետո դուք կհասկանաք, որ իմ անկեղծ ցանկությունն է աշխատել հօգուտ մեր մեծ հայկական ֆուտբոլային հանրության, որը չի ավարտվում միայն դրական գաղափարախոսի բարձր նկրտումներով, այլ այն ներառում է ապագայի հստակ տեսլականը, հայկական ֆուտբոլի զարգացման տարբեր ուղղություններում կոնկրետ նպատակները և, ամենակարևորը, գործնական ըմբռնումը, թե ինչ է պետք անել և ինչ հաջորդականությամբ, ինչպես նաև գործելու պատրաստականությամբ:

Համազգային մասշտաբով ֆուտբոլի վերափոխումը մեկ կամ երկու տարվա խնդիր չէ: Միջազգային փորձից հայտնի է, որ մարզական արդյունքների կայուն բարելավումը պահանջում է բծախնդիր, հետևողական, ստեղծագործ աշխատանք՝ ուղղված ժամանակակից խաղացողների, մարզիչների, մենեջերների և երկրպագուների մի ամբողջ սերունդ դաստիարակելուն: Այդ իսկ պատճառով ծրագիրը, որն առաջարկում եմ հայկական ֆուտբոլի վերափոխման համար, չի խոստանում ակնթարթային արդյունքներ (թեև մենք, իհարկե, կարճ և միջնաժամկետ նպատակներ ենք դնում): Ծուրջ 10 տարում մենք հնարավոր ենք համարում մարզական բարձրագույն նպատակին հասնելը:

Ես միշտ բաց եմ երկխոսության և համագործակցության համար: Հուսով եմ, որ դուք կմիանաք մեր համատեղ աշխատանքին: Խոստանում եմ, որ կանեմ հնարավոր ամեն ինչ բարեփոխումների գործընթացում բոլոր ցանկացողներին ներգրավելու համար:

ԱՐԺԵՔՆԵՐ

ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ
ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ
ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱ-ՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴԱ-ՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱ-ՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ՁԳՏՈՒՄ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Նախ, ներկայացնենք որոշ փաստեր և թվեր: Հայաստանի տղամարդկանց հավաքականն այս պահին ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում զբաղեցնում է 93-րդ տեղը: Օրինակ՝ Հայաստանը իր բնակչությամբ և 7000 դոլար մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով զբաղեցնում է 93-րդ տեղը, մինդեռ Ալբանիան համանման ցուցանիշներով 62-րդ տեղում է: Մեկ այլ օրինակ է Վրաստանը, որը ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում 77-րդն է: Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահը Լևան Կոբիաշվիլին է՝ նույնպես նախկին ֆուտբոլիստ, ինչպես և Արասը: Կանանց ազգային հավաքականն այս պահին ՖԻՖԱ-ի առաջնության մրցաշարային աղյուսակում զբաղեցնում է 143-րդ հորիզոնականը: Համեմատության համար նշենք, որ Կոսովոն՝ նույն բնակչությամբ և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով, զբաղեցնում է 102-րդ տեղը, իսկ Ալբանիան՝ 72-րդ:

Արտասահմանում հանդես եկող հայ ֆուտբոլիստների մեծամասնությունը արտասահմանյան ակադեմիաներում մարզված հայեր են, մինչդեռ մեր տեղական ակադեմիաներում մարզված հայ ֆուտբոլիստների միայն փոքր մասն է իր կարիերան ավարտում արտերկրում՝ ի տարբերություն վերը նշված երկրների: Օրինակ՝ ներկայումս կան մոտ 15 հայ ֆուտբոլիստներ, ովքեր հանդես են գալիս արտերկրում, սակայն միևնույն ժամանակ Վրաստանի տեղական ակադեմիաներից 141 վրացի ֆուտբոլիստներ խաղում են աշխարհի տարբեր հեղինակավոր լիգաներում: Հայաստանի երիտասարդական հավաքականը ՈՒԵՖԱ-2025-ի ընտրական մրցաշարային խմբում զբաղեցրեց 6-րդ տեղը՝ ընդամենը 1 միավորով առաջ անցնելով Մալթայից և Սան Մարինոյից:

Հայաստանի Պրեմիեր լիգայում՝ 2017/18 մրցաշրջանում արտասահմանցիները կազմում էին խաղացողների 27%-ը (63/231), 2018/19 մրցաշրջանում՝ 45%-ը (179/396), իսկ ընթացիկ մրցաշրջանում արտասահմանցիները կազմում են խաղացողների 49%-ը (133/269): Տեղի հայերի խաղաժամանակի հաշվին արտասահմանցի խաղացողների թվի ավելացման կայուն միտում կա: Բացի այդ, Հայաստանի Պրեմիեր լիգայի խաղացողների միջին տարիքը ներկայումս կազմում է 25,5 տարեկան՝ ի տարբերություն 2018/19 մրցաշրջանի, երբ միջին տարիքը 24,5 էր, իսկ 2017/18թթ.՝ 24,4:

Այսպիսով, այս ժամանակահատվածում ավագ խաղացողները սկսեցին ավելի շատ խաղաժամանակ ստանալ ակադեմիայի երիտասարդ խաղացողների հաշվին:

ՏԵՍԼԱԿԱՆ

Հայաստանը սպորտային ավանդույթներով երկիր է: Միջազգային ֆուտբոլային հանրությունում մենք արդեն ապացուցել ենք, որ ի վիճակի ենք լինել մրցունակ: Մենք ունենք բոլոր նախադրյալները հավակնոտ նպատակների հասնելու համար: Պարզապես ինքներս մեզանից ավելին պետք է սպասենք. չէ՞ որ փորձից հայտնի է, որ նպատակների հավակնոտությունը մեծապես որոշում է ձեռք բերված արդյունքը:

Այդ իսկ պատճառով ծրագիրը նպատակաուղղված է համառ, հետևողական աշխատանքի արդյունքում բարձունքների հասնելուն:

Տեսլական – Դարձնել ֆուտբոլը առաջատար սպորտաձև Հայաստանում

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Առաքելություն – Ուժեղ ֆուտբոլային մշակույթի կառուցում կայուն պրակտիկայի միջոցով, որը թույլ կտա դառնալ լավագույն դեսպաններ խաղադաշտում և դրանից դուրս:

ՖՈՒՏԲՈԼԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մասսայական և մանկապատանեկան ֆուտբոլի զարգացում
2. Մարզչական կրթություն
3. Ենթակառուցվածքների համար ներդրումային ծրագրերի ներգրավում
4. Ֆուտբոլի ազգային մոդելի ներդրում
5. Պրոֆեսիոնալ ֆուտբոլ
6. Ազգային հավաքականներ
7. Կանանց ֆուտբոլ

1. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ (ԿԱՆԱՆՑ/ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ)

Ֆուտբոլային բուրգի հիմքը մասսայական ֆուտբոլն է, որի զարգացումը լինելու է մեր աշխատանքի հիմնական շարժիչ ուժը. Ֆուտբոլը դարձնել զվարճալի և հասանելի բոլորի համար, ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի ֆուտբոլով զբաղվող անձանց ֆինանսական կարգավիճակը չխոչընդոտի ֆուտբոլով զբաղվելու ցանկությանը:

1.1 Համագործակցել հասարակական կազմակերպությունների հետ՝ սոցիալական ազդեցությունն ավելի խորացնելու նպատակով

1.2 Սերտացնել կապերը տարբեր ուսումնական հաստատությունների հետ, որը հնարավորություն կընձեռի երեխաներին ընդհանուր պատկերացում կազմել ֆուտբոլի մասին և սեր արթնացնել ֆուտբոլի հանդեպ: (Մինչև 2027 թ.)

1.3 Համագործակցել ՀՀ բոլոր մարզերի դպրոցների հետ, կազմակերպել ավելի շատ մրցաշարեր, փառատոներ: Ներգրավել նաև ծնողներին, ուսուցիչներին, համայնքային կամավորներին ֆուտբոլային կազմակերպչական աշխատանքներում՝ նախապես իրազեկման աշխատանքներ կազմակերպելով նրանց հետ: (Մինչև 2027թ.)

1.4 Ներգրավել ակումբներին մասսայական ֆուտբոլի զարգացման գործում՝ ապահովելով նրանց համապատասխան գույքով, մարդկային ռեսուրսներով և աջակցել տեղեկացված լինելուն, օրինակ՝ հրապարակումներ, գովազդներ, բաներներ և այլն

1.5 Ուսանողական մրցաշարերի կազմակերպում՝ տարեկան առնվազն 3 անգամ

1.6 Մանկապատանեկան առաջնությունների կազմակերպում, Մ8-ից սկսած

1.7 Կույր ֆուտբոլի և հաշմանդամություն ունեցող անձանց մրցաշարերի կազմակերպում, համագործակցություն համապատասխան կազմակերպությունների հետ

1.8 Բարեգործական նպատակներով միջոցառումների կազմակերպում, որոնցից ստացված հասույթը կտրամադրվի մարզային մասսայական ֆուտբոլը զարգացնող ակումբներին:

1.9 Մարզային սիրողական մրցաշարերի կազմակերպում

1.10 50+ մրցաշարերի կազմակերպում

2. ՄԱՐԶՉԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆԱՆՑ/ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ)

Մարզչական կրթության արդյունավետությունն ապահովելը պահանջում է մանրակրկիտ պլանավորում, բազմակողմանի մոտեցումների կիրառում, կրթական ծրագրի ստեղծում, ինչպես նաև մարզչական կրթության հասանելիություն:

2.1 Էլեկտրոնային կրթական համակարգի ներդրում՝ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ

2.2 Մարզչական ծրագրերի փոխանակման իրականացում այլ երկրների հետ

2.3 Մարզային ֆուտբոլում ներգրավված մարզիչների վերապատրաստում, որը ներառում է տեխնիկական հմտությունների, մարտավարության մշակման, հոգեբանության գիտելիքներ և այլն

2.4 Տեղացի մարզիչների գործուղումներ դեպի համաշխարհային ճանաչում ունեցող ակադեմիաներ

3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1 Ենթակառուցվածքների կառուցման համար զարգացման լավագույն ծրագրերի ներկայացման դեպքում խրախուսում ՀՖՖ-ի կողմից

3.2 Համագործակցել տեղային ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ակումբների սեփականատերերի հետ՝ առկա մարզադաշտերի և ենթակառուցվածքների վերանորոգման իրականացման գործում

3.3 Յուրաքանչյուր մարզում հիմնադրել Ակումբ, որը կմասնակցի մանկապատանեկան մրցաշարերին

3.4 2027թ-ից տեխնիկական կենտրոն ակադեմիան օգտագործման իրավունքով հանձնել ակումբներից մեկին/կամ մի քանիսին կախված զարգացման և ներդրումային ծրագրի ներկայացումից

3.5 ՖԻՖԱ-ի 4-րդ կարգի ազգային նոր մարզադաշտի կառուցում ներգրավելով հովանավորներ, որը հետագայում հնարավորություն կընձեռի հյուրընկալել ՖԻՖԱ-ի և ՈՒԵՖԱ-ի հովանու ներքո կազմակերպվող միջազգային տարբեր մրցաշարեր/միջոցառումներ

3.6 Ֆուտբոլային ենթակառուցվածքների ինտեգրում մարզային կյանքին

4. ՖՈՒՏԲՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՄՈԴԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄ

4.1 Համակարգված ծրագրեր տարբեր տարիքային խմբերի Ազգային հավաքականների համար՝ շեշտը դնելով տաղանդների բացահայտման և զարգացման վրա

4.2 Պարբերաբար մրցումների և ընկերական հանդիպումների մասնակցություն՝ ծանոթանալու և փորձ ձեռք բերելու նպատակով

4.3 Միջազգային ֆուտբոլային չափանիշների ինտեգրում Հայաստանի Հանրապետությունում

4.4 Սեփական, ուրույն խաղային փիլիսոփայության ներդրում հիմնված ազգային առանձնահատկությունների վրա՝ սկսած Ազգային բոլոր տարիքային հավաքականներից մինչև երիտասարդական հավաքական (U-21)

4.5 Մարզիչների ուսուցման ծրագրերի և արտոնագրման համակարգի համապատասխանեցում Ազգային մոդելի հետ

5. ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼ

5.1 Խաղացանկերի օպտիմիզացիա՝ ստեղծել խաղացանկերի ճկուն մոդել, որի շնորհիվ հնարավոր կլինի երկրպագուների մեծ լսարանի ներգրավումը, Պրոֆեսիոնալ առաջնության դիտարժանությունն ապահովելու նպատակով

5.2 Մրցավարների մասնակցությունը վերապատրաստման նոր ծրագրերին, որպեսզի բարելավել նրանց որոշում կայացնելու ունակությունը և մինիմալի հասցնել խաղերի ընթացքում կատարվող սխալները: Յուրաքանչյուր մրցաշրջանի մեկնարկից առաջ մրցավարները պարտավորվում են ներկայացնել Ֆուտբոլ խաղի կանոնների փոփոխությունները բոլոր մասնակից ակումբների սպորտային մասի ներկայացուցիչներին

5.3 Գործող կանոնակարգերի փոփոխում

5.4 Ստեղծել պրոֆեսիոնալ լիգա (սկսած 2024-25թթ. մրցաշրջանից)՝

· Մրցումների անկախ կազմակերպում և անցկացում

· Հեղինակային իրավունքների կոմերցիա

· Խթանել մրցակցային հավասարությունը: Ուսումնասիրել եկամտի բաշխման մոդելները՝ փոքր ակումբներին աջակցելու և հավասար խաղային պայմաններ ապահովելու համար

5.5 Զարգացման համապատասխան ծրագրերի մշակում, ըստ ակումբների խնդիրների

5.6 Օտարազգի ֆուտբոլիստների քանակի սահմանափակում (խաղադաշտում մաքսիմում 6, սկսած 2026թ.-ից ?)

5.7 Օտարազգի դարպասապահների արգելք (սկսած 2028թ.-ից ?)

6. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐ

6.1 Ստեղծել պրոֆեսիոնալ սելեկցիոն բաժին համապատասխան մասնագետներով, որը թույլ կտա հայտնաբերել տաղանդների, ինչպես Հայաստանում այնպես էլ արտերկրում

6.2 Ազգային հավաքականի հավանական թեկնածուների տեղեկատվական բազայի ստեղծում և պարբերաբար թարմացում

6.3 Վնասվածքների կանխարգելման համակարգի ներդրում

6.4 ԲԿՄԱ նախագծում խաղացողների ընտրության թափանցիկության ապահովում

7. ԿԱՆԱՆՑ ՖՈՒՏԲՈԼ

7.1 Կանանց ֆուտբոլը դարձնել հասանելի և ընդունելի բոլոր ցանկացողների համար՝ կոտրելով ազգային կարծրատիպերը

7.2 Ավելացնել ֆուտբոլ խաղացող կանանց քանակը՝ այն հասցնելով 10.000-ի (մինչև 2033թ.)

7.3 Ստեղծել այնպիսի էկոհամակարգ, որը կխրախուսի կանանց առաջնորդական դերը ֆուտբոլում

7.4 Կանանց ֆուտբոլի դեսպանների ներգրավում

7.5 Ապահովել կանանց ներկայացվածությունը հիմնական որոշումներ կայացնող մարմիններում

ԱՄՓՈՓՈՒՄ

Իմ տեսլականը հենվում է գալիք բարեփոխումների համար մի քանի հիմնական հիմքերի վրա: Նախ՝ հարյուրավոր, իսկ հետո՝ հազարավոր մարզիչների և մենեջերների ուսուցում, նախապատրաստում և ջանքերի համախմբում. երկրորդ՝ վերակառուցում և առողջ ֆուտբոլային էկոհամակարգի ստեղծում բոլոր մասնակիցների համար. երրորդ՝ բոլոր ֆուտբոլային կառույցների կառավարման բարձր չափանիշների նկատմամբ վերահսկողության ներդրում. չորրորդ՝ համագործակցության նոր, ավելի կենսունակ և բովանդակալից մոդելների ստեղծում: Պահանջվում է ժամանակ, համբերություն և հետևողականություն՝ ապագայում աշխատանքի արդյունքները տեսնելու համար:

Ցանկացած փոփոխություն և բարեփոխում՝ լինի բիզնեսում, թե սպորտում, միշտ պահանջում են նոր մոտեցումներ: Եվ այնպիսի մասշտաբային, մասսայական ոլորտում, ինչպիսին ֆուտբոլն է, հաջողությունը մեծապես որոշվում է իրենց առանցքային տեղերում գտնվող հազարավոր մարդկանցով՝ մարզիչներ, ֆուտբոլային դպրոցների և ակումբների ղեկավարներ, մրցումների կազմակերպիչներ, մարզի ներկայացուցիչներ:

Մեր ազգային ավանդույթն է՝ նշել և քննադատել թերությունները, պրոֆեսիոնալիզմի պակասը, թույլ կողմերը: Ես տեսնում եմ, թե ինչ մեծ ռեսուրս կա ֆուտբոլի զարգացման համար, եթե լինի բարձրակարգ, կառուցվածքային, հասանելի և մասշտաբային համակարգ՝ մարզիչների, մենեջերների և կազմակերպիչների վերապատրաստման և զարգացման համար: Հայկական ֆուտբոլի առանցքային պաշտոններում գտնվող հազարավոր մասնագետները պետք է մշտապես զարգացման մեջ լինեն, և ես դա տեսնում եմ փոփոխություններ սկսելու և պահպանելու առաջին և ամենակարևոր լծակներից մեկը:

Ֆուտբոլային առաջընթացը բաղկացած է և կառավարվում է տարբեր կազմակերպությունների միջոցով՝ մասնավոր ֆուտբոլային դպրոցներ, պրոֆեսիոնալ ակումբներ, մարզային ներկայացուցչություններ, ՀՖՖ:

Այս բոլոր կազմակերպությունների հաջող գործունեությունը հիմնականում կախված է դրանց կառավարման որակից. միայն ուժեղ կառավարման թիմի ղեկավարած կառույցներն են կարողանում հասնել իրենց նպատակներին: Իսկ կառավարման որակը, իր հերթին, կախված է թիմի առկա իրավասություններից, այդ կարողությունները բարելավելու ցանկությունից, ինչպես նաև դրանք բարելավելու մոտիվացիայից: Այդ իսկ պատճառով, ի լրումն զարգացման և վերապատրաստման համակարգի կառուցման, ծրագիրը պետք է օգնի ֆուտբոլային կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծելով կառավարման չափանիշներ և մեխանիզմներ: Մի կողմից, մարզումներ և զարգացման հնարավորություններ, իսկ մյուս կողմից՝ մասնակիցներին վստահված ֆուտբոլային կազմակերպությունների (հատկապես պետական մասնակցությամբ կազմակերպությունների) կառավարման չափանիշներին համապատասխանելու ակնկալիքներ:

Ծրագիրը հնարավորություն է տալիս իրացնելու յուրաքանչյուր ֆուտբոլային մենեջերի անձնական ներուժը, որի արդյունքը կբարելավի կատարողականությունը ողջ ֆուտբոլային էկոհամակարգում:

ՀԻՄՆԱՐԱՐ, ԱՆՇՐՋԵԼԻ, ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ

Հաջողության հասնելու համար մենք ստիպված կլինենք զոհաբերել հաստատված ավանդույթը՝ կարճաժամկետ հաջողությունը, այն է, որ ամեն ինչ արագ տեղի չի կարող ունենալ: Բարձր նպատակներին հասնելու համար կպահանջվի համակարգված և կենտրոնացված աշխատանք. դա ժամանակ կպահանջի: Պլանավորման ժամկետը 10 տարի է. ինչո՞ւ է այն այդքան երկար: Ինչո՞ւ չի կարելի ամեն ինչ արագ անել՝ 3-4 տարի հետո, և 2026 թվականին նստել տոնական սեղանի շուրջ:

Հայկական ֆուտբոլի առաջ դեռ կան զարգացման ու բարգավաճման տարիներ: Հայտնի է նաև, որ ֆուտբոլում, հատկապես միջազգային ֆուտբոլում, Ազգային հավաքականների մակարդակով զարգանում, աճում և հաղթում են խաղացողների սերունդներ, և ոչ թե առանձին աստղեր. 60-ականների անգլիացիները, հոլանդացիները՝ 70-ականներին, գերմանացիներն ու արգենտինացիները՝ 80-ականներին, բրազիլացիները՝ 90-ականներին, իսպանացիները՝ 2000-ականներին, գերմանացիներն ու ֆրանսիացիները՝ 2010-ականներին, իսկ դանիացիները՝ 21-րդ դարի երկրորդ տասնամյակի սկզբին: Այս երկրներին միավորում է ռազմավարական պլանավորման, բարձրակարգ ֆուտբոլիստների ամբողջ սերունդներ պատրաստելու և նրանց համար արտասովոր արդյունքների հասնելու աջակցություն և պայմաններ ստեղծելու կարողությունը:

Որոշ երկրների հաջողվել է շեշտը դնել բարձրակարգ խաղացողների զարգացման վրա, իսկ մյուսները պակաս հաջողակ են: Որոշ երկրներ սերնդեսերունդ կրթվում են մասսայական ֆուտբոլի մեծ թվով մասնակիցների շնորհիվ, մյուսները՝ հազարավոր մարզիչների և կարգապահության բարձր մակարդակի (Գերմանիա), մյուսները՝ կենտրոնացված և եզակի ծրագրի զարգացման շնորհիվ՝ էլիտար երիտասարդություն (Ֆրանսիա):

Բայց բոլորը ձգտում են մեծացնել ոչ միայն աստղ, կամ երկու, երեք, այլ խաղացողների մի ամբողջ սերունդ, որոնք ունակ են ամենաբարձր արդյունքների հասնել՝ որպես թիմ: Ի վերջո, ֆուտբոլը թիմային խաղ է: Ֆուտբոլն անխնա է այն աստղերի համար, ովքեր մեծանում են առանց բավարար թվով տաղանդավոր հայրենակիցների շրջապատման:

Եվ չնայած այս պարզ փաստերին, որ ֆուտբոլը հավերժ է, և խաղացողների սերունդները հասնում են արդյունքի: Ազգային ֆեդերացիաների կողմից ֆուտբոլի զարգացման վրա աշխատանքը հաճախ տեղի է ունենում ընդամենը 3-4 տարվա ժամկետով, մինչև հաջորդ աշխարհի կամ Եվրոպայի առաջնությունը: Եվ ժամանակ առ ժամանակ կարճաժամկետ ռազմավարությունները ձախողվում են, արդյունքները չեն բարելավվում, և ամբողջ գործընթացը նորից սկսվում է: Եվ հակառակը, երբ Ֆեդերացիաները պլանավորում են աշխատանքն ու իրականացնում այն բավական երկար ժամկետում, 10 տարի կամ ավելի: Օրինակ, Ճապոնիայի ֆուտբոլի ֆեդերացիան 2005 թվականին մշակեց իր 10 տարվա ռազմավարությունը (2005-2015) և արտասովոր հաջողությունների հասավ միջազգային ասպարեզում, իսկ Չինաստանում ֆուտբոլը լճացումից դուրս բերելու ներկայիս ռազմավարությունն ընդգրկում է 2016-ից մինչև 2050 թվականն ընկած ժամանակահատվածը՝ 35 տարվա պլանավորման հորիզոն:

Միայն բարձրակարգ խաղացողների և թիմերի մի ամբողջ սերնդի զարգացման և կրթության վրա աշխատելն արդյունք կտա: Միայն 8-10 տարվա ընթացքում ծանր, կենտրոնացված աշխատանքը թույլ կտա Հայաստանին զբաղեցնել իր արժանի տեղը համաշխարհային ֆուտբոլային ասպարեզում:

Ի՞նչ է նշանակում «սերունդ դաստիարակել»: Սա, իհարկե, առաջին հերթին նշանակում է տաղանդների զարգացման համակարգ ստեղծել: Իսկ նման համակարգը բաղկացած է մի քանի պարտադիր, ինտեգրված տարրերից, որոնք հնարավոր չէ արագ ստեղծել, իսկ արդյունքն անմիջապես չի գալիս: Հարկավոր է շատ վաղ տարիքից բարձրացնել երեխաների ներգրավվածության մակարդակը ֆուտբոլում, ստեղծել ազգային փիլիսոփայություն և խաղի մոդել և սկսել այն կիրառել մարզումային գործընթացում, արդիականացնել վերապատրաստման դպրոցները և զարգացնել մեծ թվով մարզիչներ:

Հիմնվելով խաղի ազգային մոդելի վրա՝ ստեղծել երիտասարդական և մանկապատանեկան թիմերի կառավարման ինտեգրված համակարգ: Օգնել ակումբներին ստեղծել իրենց զարգացման կենտրոնները, ստեղծել ակադեմիաներ, ներդնել խթանիչ մեխանիզմներ պրոֆեսիոնալ լիգաներում 21 տարեկանից ցածր հայաստանցի երիտասարդ խաղացողներին ներգրավելու համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ